ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.09.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/186

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.08.2020թ. թիվ 26/26-1/12067-2020 գրությամբ «ԴՄ Մարկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 12.08.2020թ. թիվ /18-2/51992-2020 գրության հիման վրա 13.08.2020թ. թիվ 26/26-1/12067-2020 գրությամբ նախաձեռնել է «ԴՄ Մարկետ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ԴՄ Մարկետ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ԴՄ Մարկետ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/186 ընթացակարգի շրջանակներում 28.08.2020թ. ժամը 12:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը: Միևնույն ժամանակ Ընկերության կողմից ներկայացվել է միջնորդություն՝ հետևյալ բովանդակությամբ.

««ԴՄ Մարկետ» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի «ՀՀ-ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(20/9-Լ)» ծածկագրով մրցույթին: Ս/թ օգոստոսի 17-ին ծանուցվել ենք ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնի կողմից, որ գնումների գործընթացի մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ պետական եկամուտների կոմիտեն նախաձեռնել է ընթացակարգ: Ծանոթացել ենք գործի մանրամասներին: Նշենք, որ հավելված 1.1-ում եղած անհամապատասխանության շտկման վերաբերյալ ծանուցումը ստացել ենք օգոստոսի 7-ին, ժամը 12:37-ին, էլեկտրոնային փոստի միջոցով: Ընկերությունը ս/թ օգոստոսի 8-ին ժամը 21:05-ին նույն էլ. Փոստին ուղարկել է հավելված 1.1-ի ճշտված տարբերակը: Իրենց նշված ժամանակահատվածում մեր ընկերությունը համակարգից չի ստացել որևէ ծանուցում, ինչպես նաև արձանագրություն Պատվիրատուի կողմից: Ծանուցվել ենք նաև ընթացակարգի քննության նպատակով հրավիրված նիստի օրվա և ժամի մասին: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Ընկերության համակարգիչը տրվել է փորձաքննության: Քանի որ փորձաքննության արդյունքները ունեն էական նշանակություն հարցի օբյեկտիվ լուծման համար, ուստի խնդրում եմ հետաձգել նիստը 10 աշխատանքային օրով»:

Այնուհետև «ԴՄ Մարկետ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«ԴՄ-ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի «ՀՀ-ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(20/9-Լ)» ծածկագրով մրցույթին: Նշենք,որ ըստ տեղեկագրում հրապարակված թիվ 4 նիստի (07.օգոստոս 2020 ժամը 9:00)արձանագրության Պատվիրատուն մերժել է «ԴՄ-ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի հայտը՝ համաձայն 526-ն որոշման 42-րդ կետի: Այնինչ Մասնակիցը հավելված 1.1-ում եղած անհամապատասխանության շտկման վերաբերյալ ծանուցումը ստացել է օգոստոսի 7-ին ժամը՝ 12:37-ին (փորձաքննության եզրակացության էջ 2 թիվ 2 սունյակում), էլեկտրոնային փոստի միջոցով: Ընկերությունը ս/թ օգոստոսի 8-ին ժամը 21:05-ին ոչ աշխատանքային շաբաթ օրով նույն էլ. փոստին ուղարկել է հավելված 1.1-ի

ճշտված տարբերակը չսպասելով մեկ աշխ. օրվա ավարտին: Էլեկտրոնային armeps համակարգից 05.08.2020թ. – 08.08.2020թ. ընկած ժամանակահատվածում անհամապատասխանության շտկման վերաբերյալ որևէ այլ նամակ էլեկտրոնային փոստի հասցեին չի եկել, որը հավաստում է նաև Փորձագետի եզրակացությունը:

Հետաքրքրականն այն է, որ թիվ 4 նիստի արձանագրությունը տեղի է ունեցել 07 օգոստոս 2020թ-ի ժամը 9:00-ին, որի համաձայն մերժվել է «ԴՄ-ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի հայտը 1.1 հավելվածը չշտկելու բովանդակությամբ, սակայն օգոստոսի 7-ին ժամը՝ 12:37-ին մասնակցին ուղարկվել է ծանուցում 1.1 հավելվածի անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ: Պատվիրատուի նիստին չներկայանալու պատճառով այս գործողությունների տրամաբանությունը մնաց անհասկանալի: Անհասկանալի է նաև, որ Պատվիրատուն չի ներկայացրել բողոքը քննող անձին թիվ 4 նիստի արձանագրության պատճենը»:

Վերը շարադրված դիրքորոշմանը կից Ընկերությունը ներկայացրել է ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետի կողմից իրականացված համար՝ 20-0081Պ համակարգչատեխնիկական փորձաքննության «Փորձագետի եզրակացություն»-ը, համաձայն որի՝ փորձագետի կողմից արվել են հետևյալ հետևությունները.

«Պատվիրատուի կողմից նշված՝ «dm.market@inbox.ru» էլեկտրոնային փոստի հասցեում պարունակվող էլեկտրոնային նամակների մեջ հայտնաբերվել են 05.08.2020թ-ից մինչև 07.08.2020թ. (այդ թվում 08. 08. 2020թ. ժամը՝ 00. 00-ին) ստացված և ուղարկված թվով 12 էլեկտրոնային նամակներ (այդ թվում՝ «info@armeps.am» էլեկտրոնային փոստի հասցեից ստացված թվով 6 էլեկտրոնային նամակներ, ինչպես նաև ստացված և ուղարկված «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(20/9-L)» անվանումներով թվով 6 էլեկտրոնային նամակներ): Վերոնշյալ էլեկտրոնային նամակների և դրանց բովանդակության վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը բերված է «Հետազոտական մաս»-ում:

«dm.market@inbox.ru» էլեկտրոնային փոստի հասցեում պարունակվող 05.08.2020թ-ից մինչև 07.08.2020թ. (այդ թվում 08. 08. 2020թ. ժամը՝ 00. 00-ին) ստացված և ուղարկված թվով 12 էլեկտրոնային նամակները (այդ թվում «info@armeps.am» էլեկտրոնային փոստի հասցեից ստացված թվով 6 էլեկտրոնային նամակների տեքստային բովանդակությունները, ինչպես նաև ստացված և ուղարկված «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(20/9-L)» անվանումներով թվով 6 էլեկտրոնային նամակները) և կցված ֆայլերը համապատասխան

պանակներով տրամադրվում են սույն եզրակացության անբաժանելի մասը կազմող՝ «20-0081Պ» ձեռագիր գրառմամբ լազերային սկավառակով:

«dm.market@inbox.ru» էլեկտրոնային փոստի հասցեում պարունակվող «Облако» (Ամպային տիրույթ) պանակում հայտնաբերվել են 05.08.2020թ-ի թվով 7 «pdf» ձևատեսակի ստացված և 7 «pdf» ձևատեսակի ուղարկված ֆայլեր, որոնց բովանդակությունը համապատասխանում է էլեկտրոնային փոստի հասցեի «Входящие» պանակի «info@eltender.am 05.08.2020 9.11» անվանումով ենթապանակում առկա և «Отправленные» պանակի «674553@mail.ru 05.08.2020 12.01» անվանումով ենթապանակում առկա ֆայլերի բովանդակություններին:

«dm.market@inbox.ru» էլեկտրոնային փոստի հասցեի «Спам» և «Корзина» պանակներում (որոնցում պահպանվում են համապատասխանաբար մերժված և գործածողի կողմից ջնջված էլեկտրոնային նամակները) պարունակվող էլեկտրոնային նամակներում 05.08.2020թ-ից մինչև 07.08.2020թ. ստացված էլեկտրոնային նամակներ չեն հայտնաբերվել»:

3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 12.08.2020թ. թիվ /18-2/51992-2020 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպված «ՀՀ-ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(20/9-Լ)» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «ԴՄ Մարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 1. 1-ում առկա էին անհամապատասխանություններ, մասնավորապես առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը պարունակում էին ոչ հստակ չափեր, միջակայքեր: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 526-Ն որոշման 41-րդ կետի, (այսուհետ՝ կարգի) 05.08.2020թ. -ին մասնակիցը ծանուցվել է ներկայաց-նելու հայտի շտկված փաստաթղթերը, սակայն սահմանված ժամկետում շտկված փաստաթղթերը չեն ներկայացվել և կարգի 42-րդ կետի համաձայն հայտը մերժվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/186 ընթացակարգի շրջանակներում 28.08.2020թ. ժամը 12:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/186 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/186 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իր կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ-ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(20/9-Լ)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԴՄ Մարկետ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.08.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ԴՄ Մարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 1.1-ով՝ 9-13-րդ չափաբաժիններով, առաջարկված ապրանքների տեխնիկական բնութագրերը պարունակում են ոչ հստակ չափեր, միջակայքեր:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով սահմանված ժամկետում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 05.08.2020թ. armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ուղարկվել է ծանուցում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.08.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «ԴՄ Մարկետ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել առաջարկված ապրանքի շտկված տեխնիկական բնութագիրը:

6. Նույն արձանագրության համաձայն՝ «ԴՄ Մարկետ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.08.2020թ. թիվ 26/26-1/12067-2020 գրությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 12.08.2020թ. թիվ /18-2/51992-2020 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև համար՝ 20-0081Պ համակարգչատեխնիկական փորձաքննության «Փորձագետի եզրակացություն»-ը հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված

պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ ***<u>հայտերի բացման և գնահատման նիստում ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:</u>***

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում <u>արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,</u> ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, <u>իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպես, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իր կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ-ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(20/9-Լ)» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԴՄ Մարկետ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.08.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ԴՄ Մարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 1.1-ով 9-13-րդ չափաբաժիններով առաջարկված ապրանքների տեխնիկական բնութագրերը պարունակում են ոչ հստակ չափեր, միջակայքեր:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով սահմանված ժամկետում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 05.08.2020թ. armeps էլեկտրոնային համակարգի միջոցով ուղարկվել է ծանուցում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.08.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «ԴՄ Մարկետ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել առաջարկված ապրանքի շտկված տեխնիկական բնութագիրը:

Նույն արձանագրության համաձայն՝ «ԴՄ Մարկետ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Հարկ եմ համարում անդրադառնալ Ընկերության կողմից որպես դիրքորոշման համար ներկայացված ապացույցին՝ համակարգչատեխնիկական փորձաքննությանը, համաձայն որի հետազոտական մասի՝ հետազոտությունն ընթացել է հետևյալ կարգով.

«Փորձաքննության ներկայացված «Lenovo 81WB» մոդելի դյուրակիր համակարգիչը միացվեց, համակարգչում տեղադրված «Google Chrome» զննարկիչ ծրագրային ապահովումը գործարկվեց և այցելվեց «https://mail.ru/» համացանցային կայք: Պատվիրատուի կողմից տրամադրված մուտքանվան և գաղտնաբառի միջոցով մուտք գործվեց «dm.market@inbox.ru» էլեկտրոնային փոստի հաշիվ:

Այնուհետև հետազոտվեց «dm.market@inbox.ru» էլեկտրոնային փոստի հասցեում պարունակվող էլեկտրոնային նամակները, որոնք պահպանված են «Входящие», «Рассылки» և «Отправленные» պանակներում: ***Հետազոտությամբ հայտնաբերվեցին պատվիրատուի կողմից նշված 05.08.2020թ-ից մինչև 07.08.2020թ. էլեկտրոնային***

նամակները: Պարզվեց, որ առկա են 05.08.2020թ-ից մինչև 07.08.2020թ. (այդ թվում 08. 08. 2020թ. ժամը՝ 00. 00-ին) ստացված և ուղարկված թվով 12 էլեկտրոնային նամակներ (այդ թվում՝ «info@armeps.am» էլեկտրոնային փոստի հասցեից ստացված թվով 6 էլեկտրոնային նամակներ, ինչպես նաև ստացված և ուղարկված «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(20/9-L)» անվանումներով թվով 6 էլեկտրոնային նամակներ), որոնց վերաբերյալ տեղեկատվությունը բերվում է ստորև՝ Աղյուսակ.1.-ում:

Աղյուսակ.1.

Հ/Հ	Էլեկտրոնային նամակն ուղարկողի էլ. փոստի հասցե	Էլեկտրոնային նամակի ստացման/ուղարկման ամսաթիվ, ժամ	Էլեկտրոնային նամակի վերնագիր	Պանակ
1	«info@eltender.am»	05.08.2020թ., ժամը՝ 09:11	«GNER-ՀՀ-ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(20/9-L)»	Ստացված (Входящие)
2	**«lusine_harutyunyan@taxservice.am»**	**07.08.2020թ., ժամը՝ 12:37**	**«Որակավորման փաստաթղթերի շտկման վերաբերյալ ՀՀ-ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(20/9-L)»**	**Ստացված (Входящие)**
3	«info@armeps.am»	05.08.2020թ., ժամը՝ 14:39	«Ավտոմատ ծանուցում ARMEPS համակարգից - [ՄՀ.6367753] Արդյունքների հրապարակում»	Ստացված\Փոստային (Входящие\Рассылки)
4	«info@armeps.am»	05.08.2020թ., ժամը՝ 16:24	«Ավտոմատ ծանուցում ARMEPS համակարգից - [ՄՀ.6394419] ՄՀ-ի հրապարակում»	Ստացված\Փոստային (Входящие\Рассылки)
5	«info@armeps.am»	06.08.2020թ., ժամը՝ 11:56	«Ավտոմատ ծանուցում ARMEPS համակարգից - [ՄՀ.6395134] ՄՀ-ի հրապարակում»	Ստացված\Փոստային (Входящие\Рассылки)
6	«info@armeps.am»	06.08.2020թ., ժամը՝ 12:13	«Ավտոմատ ծանուցում ARMEPS համակարգից - [ՄՀ.6396837] ՄՀ-ի հրապարակում»	Ստացված\Փոստային (Входящие\Рассылки)

Հ/Հ	Էլեկտրոնային նամակն ուղարկողի էլ. փոստի հասցե	Էլեկտրոնային նամակի ստացման/ուղարկման ամսաթիվ, ժամ	Էլեկտրոնային նամակի վերնագիր	Պանակ
7	«info@armeps.am»	06.08.2020թ., ժամը՝ 16:43	«Ավտոմատ ծանուցում ARMEPS համակարգից - [ՄՀ.6398622] ՄՀ-ի հրապարակում»	Ստացված\Փոստային (Входящие\Рассылки)
8	«info@armeps.am»	08.08.2020թ., ժամը՝ 00:00	«Ավտոմատ ծանուցում ARMEPS համակարգից - [ՄՀ.6403324] ՄՀ-ի հրապարակում»	Ստացված\Փոստային (Входящие\Рассылки)
9	«674553@mail.ru»	05.08.2020թ., ժամը՝ 12:01	«GNER-ՀՀ-ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(20/9-L)»	Ուղարկված (Отправленные)
10	«info@eltender.am»	07.08.2020թ., ժամը՝ 13:53	«Որակավորման փաստաթղթերի շտկման վերաբերյալ ՀՀ-ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(20/9-L)»	Ուղարկված (Отправленные)
11	«info@eltender.am»	07.08.2020թ., ժամը՝ 18:32	«Որակավորման փաստաթղթերի շտկման վերաբերյալ ՀՀ-ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(20/9-L)»	Ուղարկված (Отправленные)
12	«info@eltender.am»	07.08.2020թ., ժամը՝ 18:33	«GNER-ՀՀ-ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(20/9-L)»	Ուղարկված (Отправленные)

Փորձագետի կողմից արվել են հետևյալ հետևությունները.

«***Պատվիրատուի կողմից նշված՝ «dm.market@inbox.ru» էլեկտրոնային փոստի հասցեում պարունակվող էլեկտրոնային նամակների մեջ հայտնաբերվել են 05.08.2020թ-ից մինչև 07.08.2020թ. (այդ թվում 08. 08. 2020թ. ժամը՝ 00. 00-ին) ստացված և ուղարկված թվով 12 էլեկտրոնային նամակներ (այդ թվում՝ «info@armeps.am» էլեկտրոնային փոստի հասցեից ստացված թվով 6 էլեկտրոնային նամակներ, ինչպես նաև ստացված և ուղարկված «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(20/9-L)» անվանումներով թվով 6 էլեկտրոնային նամակներ): Վերոնշյալ էլեկտրոնային նամակների և դրանց բովանդակության վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը բերված է «Հետազոտական մաս»-ում***:

«dm.market@inbox.ru» էլեկտրոնային փոստի հասցեում պարունակվող 05.08.2020թ-ից մինչև 07.08.2020թ. (այդ թվում 08. 08. 2020թ. ժամը՝ 00. 00-ին) ստացված և ուղարկված թվով 12 էլեկտրոնային նամակները (այդ թվում «info@armeps.am» էլեկտրոնային փոստի հասցեից ստացված թվով 6 էլեկտրոնային նամակների տեքստային բովանդակությունները, ինչպես նաև ստացված և ուղարկված «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(20/9-L)» անվանումներով թվով 6 էլեկտրոնային նամակները) և կցված ֆայլերը համապատասխան պանակներով տրամադրվում են սույն եզրակացության անբաժանելի մասը կազմող՝ «20-0081Պ» ձեռագիր գրառմամբ լազերային սկավառակով:

«dm.market@inbox.ru» էլեկտրոնային փոստի հասցեում պարունակվող «Облако» (Ամպային տիրույթ) պանակում հայտնաբերվել են 05.08.2020թ-ի թվով 7 «pdf» ձևատեսակի ստացված և 7 «pdf» ձևատեսակի ուղարկված ֆայլեր, որոնց բովանդակությունը համապատասխանում է էլեկտրոնային փոստի հասցեի «Входящие» պանակի «info@eltender.am 05.08.2020 9.11» անվանումով ենթապանակում առկա և «Отправленные» պանակի «674553@mail.ru 05.08.2020 12.01» անվանումով ենթապանակում առկա ֆայլերի բովանդակություններին:

«dm.market@inbox.ru» էլեկտրոնային փոստի հասցեի «Спам» և «Корзина» պանակներում (որոնցում պահպանվում են համապատասխանաբար մերժված և գործածողի կողմից ջնջված էլեկտրոնային նամակները) պարունակվող էլեկտրոնային նամակներում 05.08.2020թ-ից մինչև 07.08.2020թ. ստացված էլեկտրոնային նամակներ չեն հայտնաբերվել»:

Այսպիսով՝ ուսումնասիրելով համակարգչատեխնիկական փորձաքննության հետազոտական մասը՝ արձանագրում եմ, որ ***«info@armeps.am» էլեկտրոնային փոստի հասցեից ստացված թվով 6 էլեկտրոնային նամակներից միայն երկուսն են ստացվել 05.08.2020թ., որոնցում որպես պատվիրատու հանդես են գալիս «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն և Երևանի քաղաքապետարանը***, ուստի հաշվի առնելով վերոնշված փաստը և հիմք ընդունելով փորձագետի կողմից արված հետևությունները՝ գտնում եմ, որ Ընկերության հայտը, Կարգի 41-րդ կետի համաձայն՝ ***արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ էլեկտրոնային եղանակով 05.08.2020թ. ծանուցված չլինելու պայմաններում Կարգի 42-րդ կետի հիմքով, այն՝*** Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում չի շտկել անհամապատասխանությունը, մերժելը իրավաչափ չէ, ուստի հնարավոր չէ արձանագրել

«ԴՄ-Մարկետ» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, հետևաբար գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.08.2020թ. թիվ 26/26-1/12067-2020 գրությամբ «ԴՄ Մարկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**